ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0010, ք.Երևան, Կորյունի 15/1, Հեռ: (00 37410) 511-773, www.court.am

№ ԴԴ-3-Ե-6206

« 23 » օգոստոսի 2023թ.

«ՀԱՅԿ ՄԿՐՏՉՅԱՆ» ԱՁ-ԻՆ

Սույնով ծանուցվում է, որ Դատական դեպարտամենտի կարիքների համար ավտոմեքենաների անիվների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/32» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում գնահատող հանձնաժողովի կողմից առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքում Ձեր կողմից ներկայացված հայտում արձանագրվել են հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, մասնավորապես՝

«Հայկ Մկրտչյան» ԱՁ

- դիմում-հայտարարության (Հավելված N 1) մեջ «մասնակցի ռուսերեն լեզվով անվանումն է» դաշտում նշված է մասնակցի հայերեն անվանումը, այնինչ՝ անհրաժեշտ է նշել մասնակցի ռուսերեն անվանումը,
- դիմում-հայտարարության (Հավելված N 1) 1-ին կետում նշված չէ մասնակցին փոխկապակցված անձանց «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/32» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանության մասին տեղեկատվությունը. անհրաժեշտ է «1) բավարարում է ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և ժամկետում ներկայացնել որակավորման ապահովում» բառերը փոխարինել «1) «Հայկ Մկրտչյան» ԱՁ-ն և իրեն փոխկապակցված անձինք բավարարում են «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/32» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և «Հայկ Մկրտչյան» ԱՁ-ն պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և ժամկետում ներկայացնել որակավորման ապահովում» բառերով:

Վերոգրյալով պայմանավորված և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, ինչպես նաև «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/32» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 8.11 կետը՝ առաջարկվում է մինչև սույն թվականի **օգոստոսի 24-ը ներառյալ** eauction.armeps.am համակարգի միջոցով շտկել վերոնշյալ անհամապատասխանությունները:

Միաժամանակ հայտնվում է, որ սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունները չշտկելու դեպքում՝ հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի:

ՂԵԿԱՎԱՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐՈՎ ՏԵՂԱԿԱԼ

ԱՐԵՆ ՄԵՍՐՈՊՅԱՆ

Կապ՝. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/32» ծածկագրով
գնման ընթացակարգի համակարգող՝ Ա. Հովհաննիսյան
Հեռ.՝ /+37410/ 511-774